## 134. ԻՆՔԸ ՉԻ ՄԸԽՌԽԼ, ԽԻԽՃՆ Ա ՄԸԽՌԽԼ

*Մի հարուստ մի քյա̈սիբ տղի վըրեր ա ունըմ ծառա մի տարի ժա̈մա̈նա̈կով։ Մի օր էս տղեն ասըմ ա. «Աղա՛, վըրեր տարին թըմամի, ինձ ի՞նչ գես տալ»։*

*Ասըմ ա. «Կտամ էլի՜, ինչ խիխճս տա»։*

*Տարին թմամըմ ա, ասըմ ա. «Աղա՛, քյնըմ եմ»։*

*Սա̈ մի արասի ա տալի տըրա̈ն։ Ասըմ ա. «Աղա՛, բա ես մի արասովը վըրե՞նց քյնա̈մ իմ խիզանի կուշտը»։*

*Ասըմ ա. «Էտ ա, տո̈ւ ես գյիգըմ, վըրենը քյնըմ ես, քյնա̈»։*

*Էտ երգըմը մի մեծ զա̈նգ ա ըլել կախ ա․րած. վըրեր օքմըի ա մեռնըմ՝ քյնըմ են, ղա̈նգը տալիս են. հվաքվըմ են, հըցնըմ, թե ով ա մըեռել. ասըմ են՝ փլանը։*

*Էս տղին քյնըմ ա, հայ հա՛ հայ պա̈նգը տալիս ա։ Հվաքվըմ են, ասըմ են. «Էտ ո՞վ ա մըեռել»։ Ասըմ ա. «Փլան հարուստը»։*

*Մհել տըենըմ են նա էլ ա հըես կյա̈լի։*

*Ասըմ են. «Արա՛, բա էն ի՞նչ ա, էն հարուստը հըե կյա̈լիս ա»։*

*Ասըմ ա. «Ինքը չի մըեռել, խիխճն ա մըեռել, խի՜խճը։ Իմ կլխին սհե՛, սհե՛ օյին պիրավ»։*

*Հա՛ ըստի տըրա̈ն թքըմ, մըրըմ են։ Նոր տա̈ տըրա̈ հախը լըիվ տալիս ա, վեր ունըմ, քյնըմ։*